

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հայաստանի և Վրաստանի ՕԵԿ կենտրոնների միջև թոփաքային տվյալների վերաբերյալ հաղորդակցությունների առցանց փոխանակման համակարգի ներդնման նպատակով

Գլխավոր վարչության կողմից հաստատվել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության ներկայացրած «Գալակտիկա» համակարգում տվյալների առցանց փոխանակման (OLDI) անվտանգության փաթեթը, դրան առնչվող փաստաթղթերը և OLDI-ի կիրառմանն առնչվող դասընթացների ժամանակացույցը, որի համաձայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության կարգավարների հետ անց են կացվել OLDI-ի կիրառման վերաբերյալ համապատասխան ուսուցողական և գործնական պարապմունքներ: Այնուհետև Գլխավոր վարչության կողմից «Հայաէրոնավիգացիա» ընկերությանը տրվել է համակարգի շահագործման թույլտվություն: «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության և «Սակաէրոնավիգացիա» (Վրաստան) ՓԲ ընկերությունների միջև հոկտեմբերին ստորագրվել է կապի օգտագործման վերաբերյալ համաձայնագրը, որը ուժի մեջ է մտել 2015 թվականի նոյեմբերի 17-ից:

Գլխավոր վարչության ստորաբաժանումների կողմից Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) համապատասխան փաստաթղթերով սահմանված չափանիշների հիման վրա մշակվել է Թոփաքների անվտանգության պետական ծրագիրը, որը համաձայնեցվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1460-Ն որոշմամբ:

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) Թոփաքների անվտանգության վերահսկողության ունիվերսալ ծրագրի (USOAP) շրջանակներում 2015 թվականի հունիսի 15-ից 25-ը ԻԿԱՕ-ի կողմից Հայաստանի Հանրապետությունում անցկացված աուդիտին: Աուդիտը նպատակ ուներ որոշելու պետությունում թոփաքների անվտանգության մակարդակը՝ ԻԿԱՕ-ի չափանիշների ներդրման և կիրառման ուսումնասիրման միջոցով: Այդ նպատակով աուդիտի թիմը անցակցրել է մանրամասն ուսումնասիրություն հետևյալ ութ հիմնական ոլորտներում՝ օրենսդրություն, կազմակերպություն, անձնակազմի վկայագրում և ուսուցում, շահագործում, թոփաքային պիտանիություն, պատահարների և միջադեպերի քննություն,

աւերոնավիզացիոն ծառայություններ, աւերոդրոմներ և վերգետնյա միջոցներ: Բացի այդ, կատարվել են այցելություններ Հայաստանի Հանրապետության ավիացիայի ոլորտի մի շարք կազմակերպություններ՝ տեղում ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

Առդիտի արդյունքում Գլխավոր վարչության աշխատանքը արժանացել է բարձր գնահատականի, թեև արձանագրվել են մի շարք թերություններ, որոնք սակայն լուրջ ազդեցություն չունեն թոխչքների անվտանգության վրա:

Բոլոր թվարկած ութ ոլորտների ցուցանիշները բարձր են միջին համաշխարհային ցուցանիշներից: Զգալիորեն բարձր է նաև ընդհանուր միջին ցուցանիշը՝ 84,23% համաշխարհայինի համեմատ, որը ներկայումս կազմում է 62,91%: Այդ ցուցանիշը բարձր է տարածաշրջանի այլ պետությունների, ինչպես նաև որոշ եվրոպական պետությունների ցուցանիշներից:

Ներկայումս միջոցներ են ձեռնարկվում ԻԿԱՕ-ի կողմից արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչներին նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ ավարտվել են կառուցապատման աշխատանքները և 2015 թվականի ընթացքում վերոնշյալ շենքերում և հանրակացարաններում բնակվող 165 ընտանիք տեղափոխվել են նոր բնակարաններ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի <<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի կոնցեսիոների կողմից ներկայացված 2013-2017 թվականների մաստեր պլանը հաստատելու մասին>> թիվ 1495 -Ն որոշման 3-րդ կետի պահանջի կատարման նպատակով հին ուղևորային համալիրի ապամոնտաժման հարցը դարձել է հասարակական և մասնագիտական լայն քննարկումների առարկա և արդյունքում կոնցեսիոների կողմից քննարկման է ներկայացվել օդանավակայանի կլոր ուղևորային համալիրի մասնակի քանդման և վերակառուցման վերջնական տարբերակը, որին զուգահեռ նախատեսվում է իրականացնել նոր ուղևորային համալիրի ընդլայնման աշխատանքներ, ինչի արդյունքում ուղևորների սպասարկման համար նախատեսված տարածքի մակերեսը կավելանա շուրջ 60 հազ.մ², կառամատույցը՝ 50 հազ.մ² (8 ինքնաթիռի կայանատեղիով), իսկ ավտոկայանատեղին՝ 20 հազ.մ²-ով:

Ներկայացված նախագծի վրա աշխատել են ինչպես միջազգային, անպես էլ հայաստանյան առաջադեմ ճարտարապետները, այն քննարկվել է Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2004 թվականի օգոստոսի 15-ի N 562-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և ընդունվել է ի գիտություն:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային տրանսպորտով տեղափոխվել է 1.918.995 ուղևոր:

Երկկողմանի միջազգային կապերն ընդլայնելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով 2015 թվականի ընթացքում օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրերի վերաբերյալ

հանդիպումներ են անցկացվել Չինաստանի և Լյուքսեմբուրգի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների արդյունքում՝

- Չինաստանի հետ համաձայնագրի նախագծի նախապատրաստման և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ հետագա գործընթացների ձեռնարկման նպատակով տեղեկատվությունը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը,
- Լյուքսեմբուրգի պատվիրակության հետ երկկողմանի խորհրդակցություններից հետո համաձայնագրի նախագիծն արժանացել է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը և Գլխավոր վարչության կողմից տրվել է դրական եզրակացություն թոփքային և ավիացիոն անվտանգության մասով: 2015 թվականի դեկտեմբերի 8-ին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը ստորագրվել է:

Գլխավոր վարչության համապատասխան մասնագետները մասնակցել են «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2012 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-երկրներին առաջարկված ուսումնական դասընթացներին:

Գլխավոր վարչությունը թոփքների անվտանգության մակարդակի բարձրացման համար և թոփքային պիտանիության հարցերով շարունակել է համագործակցությունը միջազգային և օդանավ արտադրող կազմակերպությունների հետ:

Շարունակվել է համագործակցությունը ՌԴ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև: Այդ համագործակցության շրջանակներում Գլխավոր վարչությունը ստացել է առաջարկություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին 2015-2016 ուսումնական տարվանից ընդունել Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) Թոփքային ապարատների շահագործման բաժին՝ ուսուցումը իրականացնելով ՌԴ բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակով Գլխավոր վարչության կողմից տրվել է մրցույթի հայտարարություն, իրականացվել է մրցույթ, որի արդյունքում առավելագույն միավորներ հավաքած 4 դիմորդների փաստաթղթերը ներկայումս ուսուցանում են վերոնշյալ ուսումնական հաստատությունում:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով ԻԿԱՕ և Թոփքային Անվտանգության Եվրոպական Գործակալության (ECAC) Միջպետական Ավիացիոն Կոմիտեի (MAK) նկատմամբ 2015 թվականի պարտավորությունները կատարված են:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրենց գործառույթներն իրականացնող պետական

կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների և ավիաընկերությունների շահագործողական վիճակների նկատմամբ:

2015 թվականին Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից, անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 3276 գրությունների:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ՋԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող Գլխավոր վարչության նորացված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1521 որոշման պահանջներին համապատասխանեցված պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվել են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են իրավական ակտերի հետ կապված հետևյալ աշխատանքները.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանն են ներկայացվել.

- «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2015 թվականի հունիսի 19-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացվել հետևյալ նորմատիվային որոշումների նախագծերը.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (արտաբյուջետային միջոցների հաշվին)» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2015 թվականի նախահաշիվը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն և 2005 թվականի մայիսի 25-ի թիվ 673-Ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2015 թվականի մարտի 26-ի թիվ 279-Ն որոշմամբ:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1372-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության նախագիծը, որն ընդունվել է 2015 թվականի մայիսի 21-ի թիվ 551-Ն որոշմամբ:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1142-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2015 թվականի մայիսի 21-ի թիվ 553-Ն որոշմամբ:

4. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում գտնվող երկու նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2015 թվականի օգոստոսի 6-ին թիվ 905-Ն որոշմամբ:

5. «Օդանավ շահագործողի վկայականի տրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 6-ին թիվ 963-Ն որոշմամբ:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի թիվ 202-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 6-ին թիվ 964-Ն որոշմամբ:

7. «Օտարերկրյա օդանավ շահագործողների և օդանավ շահագործող չհանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն մեկնագամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 6-ին թիվ 965-Ն որոշմամբ:

8. «Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողների և օդանավ շահագործող չհանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից մեկնագամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 6-ին թիվ 966-Ն որոշմամբ:

9. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի թիվ 944-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1424-Ն որոշմամբ:

10. «Հայաստանի Հանրապետության թռիչքային անվտանգության պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1460-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացվել և պետական գրանցում են ստացել Գլխավոր վարչության պետի հետևյալ նորմատիվային գերատեսչական իրավական ակտերը.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 27-ի թիվ 68-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 18-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 23-ի թիվ 64-Ն հրամանում լրացում կատարելու մասին» թիվ 19-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի հունվարի 11-ի թիվ 10-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 36-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 181-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 46-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի ապրիլի 27-ի թիվ 61-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 47-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական

ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի ապրիլի 20-ի թիվ 58-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 63-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 21-ի թիվ 98-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 64-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 21-ի թիվ 99-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 65-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մարտի 27-ի «Թռիչքային անձնակազմի, օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետների և օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական գիտելիքների և ունակությունների ստուգման նպատակով անցկացվող տեսական թեստավորման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 70-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 11-ի թիվ 56-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 85-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2003 թվականի ապրիլի 28-ի թիվ 87-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 89-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 181-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 98-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական

ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 27-ի թիվ 68-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 102-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 23-ի թիվ 64-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 106-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 246-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 107-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 212-Ն հրամանում լրացում կատարելու մասին» թիվ 115-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների կողմից տրված թռիչքային անձնակազմի անդամների վկայականների ճանաչման կարգը հաստատելու մասին» թիվ 128-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի օգոստոսի 10-ի թիվ 193-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1207-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 296-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1163-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» համատեղ հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի օգոստոսի 10-ի թիվ 194-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1208-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 297-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի

2014 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1162-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» համատեղ հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի օգոստոսի 10-ի թիվ 195-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1210-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 298-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1161-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» համատեղ հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի օգոստոսի 10-ի թիվ 196-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1209-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 299-Ն և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1160-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» համատեղ հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 257-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 267-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 181-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 280-Ն հրաման:

ԹՈՒԻՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. 2015 թվականին տրվել են քաղաքացիական օդանավի թռիչքային պիտանիության 29 սերտիֆիկատ և օդանավի ադմուլի 8 սերտիֆիկատ, ինչպես նաև՝ օդանավի ռադիոկայանի 36 վկայական ու օդանավի թռիչքի 8 թույլտվություն:

2. 2015 թվականին Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 26 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 4 օդանավ:

3. Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թվով 25 տեսչական ստուգումներ են կատարվել Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են օտարերկրյա օդանավերի թվով 70 ստուգումներ, համաձայն SAFA ծրագրի և կատարված ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

5. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ընկերությունների կողմից վտանգավոր բեռների օդային փոխադրման սպասարկման աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրություններ և տրվել է 3 թույլտվության վկայական:

6. Գլխավոր վարչության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում կատարվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների բազաների և գծային կայանների մի շարք ուսումնասիրություններ և տրվել է թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության 8 և օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպության 8 սերտիֆիկատներ:

ԹՈՒՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվետու ժամանակահատվածում տրվել է թվով 114 վկայականներ ու այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին:

2. Ճանաչվել (լեգալիզացվել) են այլ երկրների ավիացիոն իշխանությունների կողմից տրված թռիչքային անձնակազմի անդամների 74 վկայական:

3. Սպահովվել են մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի հետ տեղի ունեցած միջադեպերի քննության հանձնաժողովի աշխատանքներին:

ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՅՈՒՄ ԵՎ ՕՂԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Ձմեռային ժամանակաշրջանում սահմանվել է վերահսկողություն «<Զվարթնոց>> օդանավակայանի աերոդրոմի շահագործողական վիճակի պահպանման նկատմամբ:

2. Մշակվել են «<Աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների վերահսկողության>>, «<Աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների կառուցման թույլտվությունների տրամադրման և առկա խոչընդոտների վերահսկողության>>, «<Կառամատույցում աշխատանքների կազմակերպման>> ուղեցույցերի նախագծերը:

3. Մշակվել են «<Միջազգային և ներքին քաղաքացիական ավիացիայի օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների պետական և մասնագիտական վերահսկողության, ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների>> ուղեցույցի և հսկիչ թերթիկների նախագծերը:

4. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն 2015 թվականի մայիս-հունիս ամիսներին <<Զվարթնոց>> օդանավակայանի վազքուղու վերանորոգման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Ապահովվել է համապատասխան NOTAM-ների հրապարակումները: <<Զվարթնոց>> օդանավակայանի վազքուղու վերանորոգման ընթացքում սահմանվել է վերահսկողություն վերանորոգման աշխատանքների նախապատրաստման, իրականացման և ավարտի նկատմամբ:

5. <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> ՓԲ ընկերության հետ համատեղ ուսումնասիրվել և մշակվել են միջոցառումներ՝ կապված <<Զվարթնոց>> և <<Շիրակ>> օդանավակայանների տեղանքի և խոչընդոտների թվային բազայի ստեղծման համար՝ համաձայն Չիկագոյի կոնվենցիայի N15 Հավելվածի պահանջների:

6. <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> ՓԲ ընկերության հետ համատեղ քննարկվել է օդանավերի հետ թռչունների բախումների նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Ծրագրի կատարման նկատմամբ սահմանվել է վերահսկողություն:

7. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերության 2014 թվականի թռիչքների անվտանգության հաշվետվության (AST) վերաբերյալ, որը սահմանված կարգի համաձայն ներկայացվել է Եվրոկոնտրոլ:

8. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերության կողմից ներդրվող Մոտեցման ուղու դիտարկման համակարգի (APM-Approach Path Monitor) անվտանգության փաթեթի վերաբերյալ:

9. Իրականացվել է թվով 76 ՕԵԿ կարգավարների թեստավորում և վկայականի գործողության ժամկետի երկարաձգում:

10. Ապահովվել է Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև նոր միջազգային օդային միջանցքի (ELSIV 40° 37' 52"N 045° 22' 14"E) և միջազգային մայրուղու (P130 REBLO–ELSIV) ներդրման գործընթացը:

ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

- 2015 թվականին մեկ իրավաբանական անձի տրվել է օդանավ շահագործողի վկայական մեկ տարի ժամկետով

<< Ալյանս Ավիաընկերություն>> ՍՊԸ
հրաման

07.10.2015թ. թիվ 124-Ա

- Հաշվետու ժամանակահատվածում երկարացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 1 (մեկ) օդանավ շահագործողների «Օդանավ շահագործողի վկայական»-ների գործողության ժամկետ՝

<<Ռիլայբլ Յունիթ Սերվիսիզ Ավիեյշն>> ՍՊԸ 23.10.2015թ. թիվ 237-Ա հրաման

3. Դադարեցվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 1 (մեկ) օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի գործողությունը

<<Վետերան Ավիա>> ՍՊԸ
հրաման

02.035.2015թ. թիվ 38- Ա

4. Համաձայն ներկայացված հայտերի՝ իրականացվել են դեպի Հայաստանի Հանրապետություն կանոնավոր չվերթեր իրականացնող օտարերկրյա ավիափոխադրողների 2015 թվականի չվացուցակների համակարգման աշխատանքներ: Ամառ-2015 աերոնավիգացիոն շրջանի համար թվով 30 ավիաընկերությունների տրվել է կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն՝ 46 երթուղով:

Աշուն/Ձմեռ-2015/2016 աերոնավիգացիոն շրջանի համար թվով 22 ավիաընկերությունների տրվել է կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն՝ թվով 36 երթուղու համար:

5. Ամենօրյա կտրվածքով ուսումնասիրվել և համակարգվել են Գլխավոր վարչությանը ներկայացված հեռագրերը և կից ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում նշված ժամանակաշրջանում տրամադրվել է թվով 640 միանգամյա ոչ կանոնավոր չվերթերի թույլտվություն:

6. 2015 թվականի ընթացքում ուսումնասիրվել և համակարգվել են Գլխավոր վարչություն ներկայացված երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների վերաբերյալ հայտեր և կից փաստաթղթերը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ տրամադրվել է Չվացուցակում ընդգրկված ոչ կանոնավոր չվերթերի թվով 18 թույլտվություն և թվով 5 եզրակացություն:

7. Իրականացվել է օտարերկրյա ավիաընկերությունների Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և ոչ կանոնավոր (չարտերային) չվերթերի իրականացման համար ներկայացրած անհրաժեշտ փաստաթղթերի և դրանց կից փաթեթի ուսումնասիրություն և համապատասխան տվյալների մուտքագրում էլեկտրոնային տվյալների բազա՝ հետևողականությունը ապահովելու նպատակով:

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր վարչության կողմից ուսումնասիրվել է <<Այնսս>>, <<Ռիլայբլ Յունիթ Սերվիսիզ Ավիեյշն>>, <<Ատլանտիս Յուրոփիան Էյրվեյզ>> ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին դրանց համապատասխանության վերաբերյալ ներկայացվել է համապատասխան եզրակացություն:

ԻԿԱՕ <<Անվտանգություն>> N17 հավելվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի պահանջներին համապատասխանության նպատակով ուսումնասիրվել են նաև

օտարերկրյա՝ «Յուս էյր», «Սկատ», «Վիմ ավիա», «Ուրալյան ավիաուղիներ», «Լօթ Փոլիշ Էյրլանս», «Միդլ Իսթ Էյրլայնզ», «Ֆլայ Դուբայ», «Ջորդան ավիեյշն Էյրլայնզ», «Ավստրիական ավիաուղիներ», «Ատլաս Ջեթ», «Սարատովյան Ավիաուղիներ», «Ջեորջիան Էյրվեյս», «Ալ Նասեր», «Էյր Կահիրո», «Արկիա», «Ռուս Լայն», «Էգեյան ավիաուղիներ», «Էյր Արաբիա», «Բուլղարիան Էյր», «Բուլգարիան Էյր չարտեր» և «Չեխական ավիաուղիներ» ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին դրանց համապատասխանության վերաբերյալ ներկայացվել են համապատասխան եզրակացություններ:

2015 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ՝ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» («Ջվարթնոց», «Շիրակ»), «Հայաերոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերություններում, ինչպես նաև «Ջվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում շահագործվող անվտանգության տեխնիկական սարքավորումների տեղադրում և սպասարկում իրականացնող «Կոնսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում: Տեսչական ստուգումների ընթացքում բացահայտված թերությունների ու անհամապատասխանությունների մասով համապատասխան առաջարկությունները ներկայացվել են վերը նշված ընկերությունների տնօրինություններին:

Գլխավոր վարչության կողմից իրականացվել են «Ջվարթնոց» օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիների, ուղևորների հաշվառման և ուղևորների ուղեբեռների զննման ընթացակարգերի փորձարկումներ պայմանական խախտողների միջոցով: Մասնավորապես, փորձարկումներն իրականացվել են օդանավակայանային համալիրի ծառայողական մուտքում, հատուկ վերահսկելի գոտու մուտքի և հսկիչ-անցագրային կետերում, «Ջվարթնոց» օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիների փորձարկումներն իրականացվել են համապատասխան մուտքի անցագրերով:

Ուղևորների հաշվառման և ուղևորների ուղեբեռների զննման ընթացակարգերի փորձարկումներն իրականացվել են պայմանական ուղևոր խախտողի միջոցով, ուղեբեռում զենքերի և պայթուցիկ սարքերի նմանակների օգտագործմամբ:

Բոլոր փորձարկումների ընթացքում պայմանական խախտողները և խախտման միջոց հանդիսացող առարկաները հայտնաբերվել են օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության աշխատողների կողմից:

ԻԿՍՕ «Անվտանգություն» N17 հավելվածի, ԵԿԱԿ «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի» դրույթներին «Ջվարթնոց» օդանավակայանում օտարերկրյա ավիաընկերությունների չվերթերի ուղևորների հաշվառման գործընթացի, ուղևոր-ուղեբեռ համապատասխանության, անձնակազմերի անդամների կողմից օդանավերի

նախաթիչքային գնման ընթացակարգերի համապատասխանության ուսումնասիրման նպատակով տեսչական ստուգումներ են իրականացվել «Աերոֆլոտ-ռուսական ավիաուղիներ», «Սիբիր», «Ավստրիական ավիաուղիներ», «Էյր Ֆրանս», «Ատլաս Ջեթ», «Ուրալյան ավիաուղիներ», «Տրանսաերո», «Վիմ ավիա», «Յուտ Էյր», «Էյր Արաբիա», «Միդլ Իսթ Էյրլանս», «Ուկրաինական միջազգային ավիաուղիներ», «Բելավիա» օտարերկրյա ավիաընկերություններում և տեսչական ստուգումների արդյունքների մասին Գլխավոր վարչության պետին են ներկայացվել վերը նշված ավիաընկերությունների կողմից իրականացվող անվտանգության միջոցառումների համապատասխանության վերաբերյալ եզրակացությունները, ինչպես նաև Գլխավոր վարչության պետի հանձնարարությամբ տեսչական ստուգման արդյունքները համապատասխան գրությամբ ներկայացվել են վերը նշված ընկերությունների տնօրինություններին:

Շարունակական ուսումնասիրություններ են իրականացվել ուղևորների սպասարկման գործընթացների նկատմամբ: Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների հետ կապված 2015 թվականի ապրիլի 10-ից մինչև 28-ը Գլխավոր վարչության պետի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացվել են 100-ամյակի միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող պաշտոնական պատվիրակությունների դիմավորման/ճանապարհման աշխատանքներ:

2015 թվականի օգոստոս ամսվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել է «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ («Զվարթնոց», «Շիրակ» օդանավակայաններ) ավիացիոն անվտանգության ծառայությունների թվով 50 աշխատակիցների ատեստավորում, որի արդյունքներով նրանք ստացել են համապատասխանության սերտիֆիկատներ:

2015 թվականի ընթացքում Գլխավոր վարչություն են ստացվել թվով 27 հայտ՝ թիչքային անցագրերի տրամադրման համար, պատրաստվել և ավիաընկերությունների օդանավերի անձնակազմերի անդամներին է հատկացվել թվով 91 թիչքային անցագրեր:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Նախագահի և արտասահմանյան երկրների բարձրաստիճան ղեկավարների, Ազգային Ժողովի նախագահի, Վարչապետի մեկնումների և ժամանումների ընթացքում իրականացվել են միջոցառումներ՝ կապված չվերթերի անվտանգության ապահովման հետ: Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է թվով 52 Լիտեր «Ա» և 16 հատուկ չվերթերի սպասարկում:

«Զվարթնոց» օդանավակայանից 2015 թվականին գնվել և մեկնել է 944.373 ուղևոր: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում պահպանության տակ վերցված է 213 օբյեկտ, հակահրդեհային պահպանության տակ վերցված է 74 օբյեկտ, գործում է 223 տազնապի ազդանշանային համակարգ, այդ թվում պահպանության 139 և հրդեհի 64 ազդանշան: Գործում է փակ հեռուստահսկման համակարգը /473 տեսախցիկ/, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների, բեռների, փոստի, օդանավերի վերգետնյա սպասարկումների ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի

գոտիներում օբյեկտների պահպանության, անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ:

<<Շիրակ>> օդանավակայանից 2015 թվականին գնվել և մեկնել է 20.666 ուղևոր: <<Շիրակ>> օդանավակայանում պահպանության է վերցված 23 օբյեկտ, գործում է 2 պահպանության ազդանշանային համակարգ: Գործում է փակ հեռուստահսկման համակարգը /16 տեսախցիկ/, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների սպասարկման ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի գոտիներում անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ:

2015 թվականի ընթացքում անհրաժեշտ աշխատանքներ են տարվել քաղաքացիական ավիացիայի համակարգում աշխատող զինապարտ պահեստազորայինների ցուցակների ճշգրտման և ամրագրման ուղղությամբ, համապատասխան զինկոմիսարիատներ են ներկայացվել համակարգի կազմակերպությունների 87 աշխատողների վերաբերյալ տվյալներ:

2015 թվականի ընթացքում մշակվել և Գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության քաղաքաշտպանության Պլանը>>: Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 28-ի <<Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու ծրագիրը հաստատելու մասին>> N306 ԱԳ որոշման 17-րդ կետի պահանջների համաձայն, <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքում կազմակերպվել և անցկացվել է քաղաքաշտպանության ուժերի երեք /24.03.15թ., 17.06.2015թ. 10.10.2015թ./ ուսումնավարժանքներ <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի քաղաքաշտպանության կազմավորումների միջև կապի և փոխհամգործակցությանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ պետությունը պաշտպանությանը նախապատրաստելու աշխատանքների շրջանակներում>> թեմայով և ուսումնավարժանքի արդյունքերի մասին հաշվետվությունները ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

<<Շանթ-2015>> հրամանատարական ուսումնավարժանքի աշխատանքների նախապատրաստման և պատշաճ մասնակցության նպատակով ավիացիոն անվտանգության վարչության կողմից իրականացվել են անհրաժեշտ աշխատանքներ և ապահովվել է ստացված առաջադրանքների ու հանձնարարականների կատարումը:

Իրականացվել է Գլխավոր վարչության պահեստային կառավարման կետի օդափոխության համակարգի, գաղտնի փաստաթղթերի վարման սենյակի վերանորոգում և կահավորում, թարմացվել են քաղաքաշտպանության պաստառները, քարտեզները և մատյանները, քաղաքացիական ավիացիայի համակարգում անցակցվել է պետական պահուստի առկա գույքի և նյութերի պահպանության, ապաստարանների, կառավարման հրամանատարական կետի վիճակի գույքագրում և կազմվել է համապատասխան արձանագրություն:

2015 թվականի ընթացքում պարբերաբար իրականացվել է «Զվարթնոց» օդանավակայանի վթարա-փրկարարային հաշվարկների մարտունակության վիճակի ուսումնասիրություններ՝ փորձնական տազնապների հայտարարման միջոցով /23 անգամ/:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ

1. 2015 թվականի ընթացքում ապահովել է Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ չվերթող օդանավերի թռիչք-վայրէջքների աերոնավիգացիոն սպասարկում՝ թռիչք – վայրէջք 9171, տարանցիկ թռիչքներ – 2553:

2. 176 օդային երթևեկության կարգավարներ անցել են ընդհանուր մասնագիտական ուսուցում և վերապատրաստում, 15 կարգավար ստացել է ինքնուրույն աշխատանքի թույլտվություն:

3. Ներդրվել է մոտեցման ուղու դիտարկման «Approach Path Monitor» համակարգը:

4. Շահագործման է հանձնվել նոր ԱՏԻՍ ավտոմատացված տեղեկատվական համակարգը:

5. Իրականացվել են Երևան (EVN) P3D և Գյումրի (GYU) P3D բազմադիրքային դիտարկման համակարգերի կայանների վերազինման աշխատանքները, արդիականացված համակարգը մինչև 2016 թվականի հունվարի 31-ը գտնվելու է տեխնիկական փորձարկումների փուլում:

6. «ՀՀ, ք. Երևան, օ/կ «Զվարթնոց» – ՎՀ, ք. Թբիլիսի, օ/կ» հատվածում վարձակալվել և հանձնվել է շահագործման E-1 թվային կապուլին:

7. «Շիրակ» ԱԿԿ-ում տեղադրվել է «Գալակտիկա» ավտոմատացված համակարգը, տեղադրվել և ներդրվել է նոր թվային փաստագրման և ձայնային տեղեկատվության վերարտադրման «SMAR-T» համակարգը:

«Ավիատուսումնական կենտրոն» ՓԲԸ

2015 թվականին «Ավիատուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորել են 105 ուսանող և վերապատրաստվել 334 ավիացիոն մասնագետներ (օդաչուներ, կարգավարներ, ավիահինժեններներ, ավիատեխնիկներ, ավիաընկերությունների ներկայացուցիչներ և բորտուղեկցորդներ):

«Ավիաբուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

2015 թվականին բժշկական հետազոտության են ենթարկվել թվով 91 օդաչու, 12 բորտուղեկցորդ, 23 կուրսանտ, 85 կարգավար, 1379 վերգետնյա ծառայության

աշխատողներ, իրականացվել է 8230 աշխատողի նախահերթափոխային բժշկական ստուգում և 605 սանիտարական հետազոտություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի
2010-2014 թվականների հիմնական արտադրական
ցուցանիշներ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	2011թ.	2012թ..	2013թ.	2014թ.	2015թ.	2015թ. կատարողականը 2014թ. նկատմամբ%
1	Փոխադրված ուղևորներ	հազ.մարդ	1674.47	1763.38	1758.24 5	2082.75	1918	92.1
2	Փոխադրված բեռ և փոստ	տոննա	10034	12283	10365	10345	10175	98.4
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	10164	10646	8953	10553	9171	86.9
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր	չվերթ	36264	34244	34513	29230	23553	80.6

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային տրանսպորտով տեղափոխվել է 1918995 ուղևոր, 2014 թվականի համեմատ նվազել է 7.9 %-ով: